ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԽՕՍՔԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ 125 ԱՄԵԱԿԻՆ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՄԷՋ (7 Դեկտեմբեր 1994)

Ինձի համար յուզիչ էր այս երկու ժամը, և իմաստալից: Իմաստալից, որովհետև ա՛յս օրուան, Երկրաշարժի աղէտին այս վեցերորդ տարելիցին կը զուգադիպէր այս յայտագիրը: Երկրաշարժը եկաւ կործանեց, կեանքեր տարաւ, Աստուած գիտէ ի՞նչ ծաղիկներ, ինչ հանճարներ՞ը, այդ կորսուածներուն մէջ: Բայց այս ճնշող, տանջող գաղափարներու, զգացումներու հակառակ, մենք կը հաւաքուինք և Կոմիտասի և Յովհաննէս Թումանեանի ծննդեան 125 ամեակի առիթով յայտագիր կը կազմակերպենք: Սա խորհրդանիշ մըն է: Խորհրդանիշ է հայու հոգիին: Թէ՝ նա կարող է իր աճիւններէն Փիւնիկի պէս վերակենդանանալ: Թէ՝ նա կարող է իր ցաւերը անուշցընել, իր չարչարանքներուն կապանքին և շղթային հակառակ ազատօրէն թռիչք առնել:

Եւ ես կուզեմ իմ գնահատանքս յայտնել թէ՛ Գրիգորիս Սրբազանին, որպէս Առաջնորդը Շիրակի թեմին, թէ՛ այս պատուական ուսուցիչներուն, և թէ աշակերտներու ծնողներուն և աշակերտներուն, որոնք միասնաբար նոյն իտէալի ճամբուն մէջ, ուխտաւորի պէս ճամբայ են ելած, հասնելու (դեռ չենք հասած) այն ուխտին որ մեր ժողովուրդի ապագայի մտահոգութենէն է առաջադրուած: Թէ՝ ի՞նչ պիտի լինի Հայաստան աշխարհի և ափիւռքի մէջ ցրուած մեր ժողովուրդի հոգիի կեանքը: Պիտի ունենա՞նք, թէ պիտի մեռնի հոգին: Եւ եթէ հոգին մեռաւ, այլևս ի՞նչ կ'արժէ ապրել այս մարմինին մէջ: Եւ ծանր է այս մտատանջութիւնը: Ծանր է, որովհետև կարիքը, որ մեզ դէպի մեր իտէալի բարձունքը կը մղէ, շատ է, և բարձունքը ցից: Եւ չը գիտենք թէ պիտի կարողանա՞նք հասնիլ գագաթին: Բայց եթէ մենք մեր մտադրութիւնը հիմնաւորենք, ուխտաւորի պէս մեր ուխտին մասին միայն մտածենք, Աստուած անպայման մեր ձեռքէն բռնած մեզ հետ միասին պիտի քայլէ, որպէսզի մենք հասնենք այդ բարձունքին:

Մեր հոգևոր կարիքները անհուն են, և մեր ուժերը փոքր և տկար: Ութը միլիոն հայութեան անունով կը խօսինք, աշխարհի մէջ:

Ութը միլիոնին դաստիարակութիւնը, անոնց սնունդ տուող մշակները քանի՞ հատ են: Հազիւ մէկ ափ լցնող: Բայց մենք գիտենք թէ ափ մը ցորեան երբ Աստուած օրհնէ, ամէն մէկ հատիկը աստղերուն պէս պիտի շատանայ: Աւետարանին պատգամն է.—եթէ հունտը բարեբեր հողի մէջ իյնայ, այն ատեն միայն ծառ պիտի դառնայ, և մէկի տեղ վաթսուն, մէկի տեղ հարիւր պտուղ պիտի տայ: Այս հոգիով ես ապրեցայ այս երկու ժամը: Յուսալից:

Իսկ այդ երկու Տիտանները անմահ են, հանճար են: Բարեբախտաբար երկուքն ալ նոյն շրջանին ծնած, ապրած, գործած, և իրար հետ ևս գործակցած են: Ուրախ եմ պարոն Մելքոնեանին ներկայացման համար, ծանօթացնելով Թումանեանը իր բազմերես իրագործումներուն մէջ: Կարևոր էր այդ բոլորը իմանալ: Կոմիտասը նոյնպէս: Եւ բոլոր կատարողները, երգող, նուագող, արտասանողներ, բոլորն էլ ուրեմն մեզ տարին այն անդաստանին, ուր Կոմիտասը և Թումանեանը ուզած են որ ակօսեն բերրի դաշտը, ցանեն հունտերը, այն հաւատքով որ այդ հունտերը պիտի չը մեռնին, ոտնակոխ պիտի չը դառնան: Աւետարանի նոյն պատմութեան մէջ, հունտերէն ոմանք կ'իյնան ճամբու եզերքը, և թռչուններ կուգան, կ'ուտեն, կը կոցահարեն, և ոչինչ կը մնայ նրանցից: Հունտերէն ոմանք կ'ընկնին ժայռերու վրայ, ուր ճեղքերու մէջ մի քիչ հող կայ, և հետևաբար այդ հողին չափով կը ծլին, բայց չեն կարող ծաղկիլ, որովհետև արևը կուգայ, կը խանձէ, կը չորացնէ զանոնք: Ուրիշներ կ'ընկնեն փուշերու, տատասկներու, անպէտք խոտերու մէջ, որոնք կը խեղդեն այդ թանկագին հունտերը: Երանի այն հունտերին որոնք բարեբեր հողին մէջ ընկնելով բազում պտուղներ կուտան:

Երկուսն էլ, Թումանեանը և Կոմիտասը, անկախաբար իրարմէ, բարեբեր հողի մէջ ինկած հունտի նման պտղաբեր դարձան: Նոյն հոգիէն առաջնորդուած, երկուսն էլ յայտարարած են որ ժողովուրդին պէտք է գնաս, եթէ կ'ուզես դու ժողովուրդի կեանքը ներկայացնել, ժողովուրդին ձայնը, երգը լսել: Եւ Կոմիտասը ճիշտ այն հանճարն է որ մենակը այդ ամբողջ գործը կատարեց: Մենակը գտաւ հայ երգին մաքուր ակունքը, սկզբունքները: Մեր հին ձեռագիրներուն մէջ թաղուած իմաստը այն խազերուն, որոնք գործածուած էին 5-րդ դարէն մինչև 15-րդ դար: Յետոյ մի կերպ անյայտացած, կորսուած: 1834 թուականին, Պոլսոյ մէջ մի քանի դպրապետներ միասին գալով մի նոր տեսակի հայկական ձայնագրութիւն ստեղծեցին: Եւ Կոմիտասը հայկական այդ ձայնագրութիւնը սովորելով, գործածեց, պտղտեց, քայլեց գիւղէ գիւղ, գաւառէ գաւառ Հայաստան աշխարհի մէջ, և հաւաքեց այն երգերը, այնպէս ինչպէս ժողովուրդը կ'երգէր:

Այդ երգերուն մէջ գտաւ Հայ երաժշտութեան քառալարի դրոյթը: Եւ այդ ստեղնաշարերու դրոյթին մէջ տեսաւ հայկական երգի կշռոյթը: Երգի կշռոյթ մը որ ոչ մէկ կապ ունի որևէ մէկ ուրիշ ժողովուրդի, մեծ Եւրոպական երկիրներու երաժշտութեան կշռոյթին հետ: Հայկական երգի մէջ, միանէօր-մաժէօր ձայնաշարերը չկան: Հայը ունի իր ինքնուրոյն երաժշտութիւնը, ունի իր կշռոյթը որ իր քերթողութեան կշռոյթէն կը ստանայ: Հետևաբար երգը և բառը զիրար պէտք է գրկեն: Ներդաշնակ պէտք է հնչեն: Եւ տակաւին կայ հայկական շեշտը: Ամէն բառ իր շեշտը ունի: Բայց կայ երկրորդ մի շեշտ, որ նախադասութեան կուտայ մի մասնաւոր իմաստ, նշանակու-

թիւն: Երբ կ'ըսես. «Ես այս երեկոյթին պիտի երթամ», յայտնի չէ թէ մասնաւոր իմաստ տուող շեշտը ո՞ր բառի վրայ ես դրեր: Այդ իմաստը կը յայտնըուի երբ լսենք թէ շեշտը ո՞ր բառի վրայ է:

Այսպէս 1. «**Ե՛ս** այս երեկոյթին պիտի երթամ» («Դու պիտի չերթաս»):

2. «Ես **ա՛յս** երեկոյթին պիտի երթամ» («Ուրիշ երեկոյթներ ևս կան, բայց **այս** մէկին պիտի երթամ»):

3. «Ես այս **երեկոյթի՛ն** պիտի երթամ» («Պարահանդէս էլ կայ, բայց պիտի չերթամ»):

4. «Ես այս երեկոյթին **պիտի՛** երթամ» («Եւ դու չես կարող ինձ արգիլել»):

5. «Ես այս երեկոյթին պիտի **երթա՞մ»** («անձրև, ձիւն, կարկուտ էլ լինի, **պիտի երթա՞մ»):**

Այսպէսով կ'ունենանք հինգ բառերու իմաստին համաձայն, հինգ շեշտ, հինգ տարբեր նախադասութիւն, հինգ տարբեր զգացումներ արտայայտուած, և հետևաբար հինգ տարբեր եղանակներ: Եւ Կոմիտաս այդ շեշտը կը փընտռէ, ամէն մէկ երգին մէջ: Կոմիտաս հանճարը դպել է մեր ժողովուրդի կեանքին ամէն մէկ երեսին: Այսպէս կարող ենք մեր ժողովուրդի կեանքին տասներկու երեսները գտնել Կոմիտասի երգերուն մէջ:

1. Այնտեղ կը գտնենք Հայաստանի բնութիւնը, գլգլումը առուակների, ֆշշոցը հովին, կկուն կաքաւին և լորիկին, «Լուսնակն անուշ ու հովն անուշ»ը: Եւ ամբողջ բնութիւնը Հայաստան աշխարհի:

2. Կոմիտաս մանկավարժ էր և ուսուցիչ: Մանուկներու համար երգեր գրեց:

3. Օտարամուտ եղանակներու ներքև յարմարեցուած հայկական բառերու փոխարէն, տուաւ հայկական հայրենասիրական երգեր—«Հայ Ապրենք», «Հիմի էլ լռենք», «Ով մեծասքանչ», «Մայր Արաքսի»:

4. Հերոսական երգերու նմոյշներ ունինք «Սիփանայ Քաջեր» և «Մոկաց Միրզէն» երգերով:

5. Հեգնանքի երգերը վերցուած են կեանքի զանազան վիճակներէն: Հարբած ուսանողի երգ՝ «Ոհ, ի՜նչ քաղցր բան»: Հարսանեկան երգերու մէջէն այն պահը երբ հարսը կեսուրին տան առջևէն կը տանին, և կը կանչեն «Թագուորի մէր դուս արի, տես քեզ ինչեր ենք բերէ», «Տուն ալող», «Ջուր բերող», և վերջապէս «Քո գլուխ տըմպող ենք բերէ»: Կամ՝ «Խումար պառկէ երես բաց»:

6. Պարեր.—Կոմիտաս այնքան բծախնդրօրէն կը վերլուծէ տղայի և աղջկայ շարժումները ձեռքի, մատներու, բազուկի, ծունկի և ամբողջ մարմնի: Պարը արուեստն է շնորհալի և իմաստալից շարժումների:

7. Հարսանեկան երգեր հաւաքած է հետևելով արարողական տարբեր պահերուն. Փեսին գովքը. «Աստուած շնորհաւոր անի» մաղթանքը. կատակ ու հեգնանք՝ «Էն դիզան», «Թագուորի մէր դուս արի», և այլն:

8. Սիրոյ երգեր, թէ՛ տխուր և թէ ուրախ, հիացական:

9. Պանդուխտի երգերուն մէջ հայ վիշտը, հայու ցաւը կայ, որ լալկան չէ, զուսպ է, գիտակից և դիմացկուն: Այս հոգին պէտք է արտայայտել «Կռունկ» և «Սիրտս նման է» Անտունի երգերով:

10. Թատերական: Կոմիտաս ծրագրած էր չորս օպերաներ գրել. ա. Հերոսական՝ «Սասունցի Դաւիթ»: բ. Պատմական՝ «Վարդան Մամիկոնեան»: գ. Երգիծական՝ Յակոբ Պարոնեանի «Քաղաքավարութեան վնասները», և քնարական՝ «Անուշը»: Անուշի համար Թումանեանի հետ Կոմիտասի թղթ-

թակցութիւնները կան, ուր իր մտահոգութիւնները և առաջարկութիւնները կը ներկայացնէ—բնագրի մէջ կարգ մը փոփոխութիւններ, հայկական նուագախումբ, հայկական նուագարաններով:

11. Աշխատանքի երգերը, «Հօրօվել»ները: Այստեղ կայ ամբողջ Հայաստանի դաշտավայրը: Կայ լծկան եզը, արօրը, մանկալը, որ պիտի երգէ, պիտի խօսի իր «եզօ ջան»ին հետ: Ամէն անգամ որ «Հո՜» կը բացականչէ, տարբեր զգացում կը դնէ իր ձայնին մէջ: Զգաստացնող շեշտ մը կամ փաղաքշական, քնքուշ, քաջալերական խրախոյս մը: Հայ մշակին, հայ գիւղացիին ամբողջ կեանքը պատկերուած է Աշխատանքի երգերուն մէջ:

12. Կրօնական երգեր: Կոմիտասի Պատարագը ուրիշ հրաշալիք է: Օտար ազդեցութիւններէն մաքրեց, զտեց Կրօնական երգերը, զանոնք վերադարձնելով իրենց հայկական կրօնական Հոգիին և ինքնուրոյն երաժշտութեան: Գտնուած էին հայեր (մինչև իսկ Մակար Եկմալեան), որոնք թերթերու մէջ յայտարարել էին թէ «Հայը երգ չունի», և թէ ունեցածն ալ արեւելեան է, արաբ-պարսկական, կամ բիւզանդական է: Կոմիտաս Վարդապետ չէր կրնար հանդուրժել այսպիսի անհիմն յայտարարութեան, և գրեց, թէ՝ «Հայը ունի ինքնուրոյն երաժշտութիւն»: Եւ արա ապացոյցը իր երգերուն մէջն է:

Այսպիսի հրաշք է, այսպիսի Աստուածային շնորհք է որ մենք իբրև Հայ ժողովուրդ ունեցել ենք: Թումանեանն էլ, Կոմիտասն էլ մեր փառքն են: 1915 Ապրիլ 24-ին դէպի սպանդանոց դրկուած ընտրանիին և մտաւորականներուն մէջն էր Կոմիտաս: Ան, 45 տարեկանին, իր անձին միութիւնը կորսնցուց, «խելագարուեց», ոչ թէ ինքզինքին վրայ մտածելով, այլ որովհետև տեսաւ իր ընկերները, մտաւորականները, Վարուժանը, Սեւակը, բոլոր միւս հանճարեղ գրողները սպանդի տարուած: Տեսաւ իր ժողովուրդին կոտորածը: Թէ իսկ թուրք փաշան լինէր զինքը ետ Պոլիս բերողը, ինք անիմաստ նկատեց այդ ազատումը: Նա չէր կարող այլևս երգել: Չէր ուզեր այլևս խօսիլ: Իր խելագարումը ինքնազոհութիւն էր: Ու Կոմիտաս լռեց: Կոմիտաս մեռաւ 1915-ին: Փարիզի բուժարանին մէջ մնաց մինչև 1935 երբ իր հոգին ազատ արձակուեց մարմնի կապանքներէն, և 1936-ին իր աճիւնները փոխադրուեցան իր հայրենի տունը, իր Հայաստանը: Եւ այստեղ իր հոգին ներկայ է և պիտի մնայ, որովհետև ինքը կայ իր յաւերժական երգերուն մէջ, այնքան յաւերժական որքան հայ ժողովուրդն է: Կը մաղթեմ որ այս գիտակցութիւնը մեզի երբեք չի պակսի: